«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

2025-2030 թվականների զարգացման ծրագիր

Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ՝

Ավագյան Անահիտ Արմենակի

**2024**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

3. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԾՈՒԹՅՈՒՆ

3.1. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.2.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ , ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ , ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ , ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

3.4. ԴՊՐՈՑԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

3.5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

3.6.ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.7.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ , ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ, ՄԻՋՈՑՆԵՐ, ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՌԻՍԿԵՐ,ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

6. ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏ

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Փոխարինելով հայրերին ու մայրերին, օգնության գնալով ավագ եղբայրներին ու քույրերին նրանց մեծ աշխատանքում՝ երիտասարդությունը պետք է անխոնջ կերպով զինվի գիտելիքներով:*

*Մ. ԳՈՐԿԻ*

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

Հայաստանի Հանրապետության կրթության նոր մոդելի կառուցման պայմաններում, կրթական գործընթացում նորարարությունների ներդրումը դառնում է առաջնային խնդիրներից մեկը: Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրներից մեկն է նոր սերնդի մոտ ձևավորել դինամիկ, ժամանակակից հասարակության մեջ գործելու և հաջողության հասնելու կարողություն: Այս ամենը ստիպում է մտածել, թե ինչպես դարձնել ուսումնական գործընթացը արդյունավետ, կյանքի պահանջներին համապատասխան,ինչպես գտնել նոր ուղիներ և հնարներ կրթության որակի, մոտիվացիայի բարձրացման,ուսումնական միջավայրի վերակառուցման և վերափոխման և , առհասարակ, կրթական որակի բարեփոխման համար: Այս հարցում կարևոր և ռազմավարական մեծ նշանակություն ունի դպրոցի զարգացման ծրագիրը և որը գրվելու է առաջիկա 5 տարիների համար:

Սույն զարգացման ծրագիրը ապահովելու է՝

- ✓ կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային

արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

- կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.
- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.
- ուսումնական հաստատությունում կրթության աշխարհիկ բնույթը.
- ուսումնական հաստատության ողջամիտ ինքնավարությունը.
- բոլորի կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:
- ուսումնական հաստատության կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը,
- անհրաժեշտ պայմանների ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի , Լիճք համայնքի Ա-2 թաղամասի 12-րդ փողոց 8շ. հասցեում, ստեղծվել է 1981 թվականին։

Պետ ռեգիստրի համար/ամսաթիվ ՝ 03Ա 061828/0810-08-03,

Հեռախոս՝ 094644656,

Իրականացվող կրթական ծրագրի աստիճան՝ միջնակարգ,

Անշարժ գույքի կադաստրային ծածկագիր՝ N17032017,

Ունի 5660մ քառ. տարածք, ունի նաև 342 մ քառ. տարածք ունեցող նկուղ, որը ծառայում է որպես ապաստարան։ Ջեռուցվող մակերեսը 5660մ քառ., շենքի տիպը D-1,մասնաշենքն օգտագործվում է ամբողջությամբ,շենքի վերանորոգման վիճակը 1-5 միավոր սանդղակով գնահատվել է՝

- Հարմարավետության մակարդակը՝ 3
- Ներքին հարդարման վիճակը՝ 3
- Վերանորոգման անհրաժեշտություն՝ 2
- Շենքի օդի խոնավություն՝ 4
- Կառուցվածքային ամրությունը՝ 3։

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ Ոչ առևտրային

Տնօրեն՝ Ալֆրեդ Սմբատյան, 094 644656



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա

ԼԻՑԵՆԶԻԱ № 0314

Սույնով վավերացվում է, որ
<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Լիճք Ա-2 թաղամաս 12-րդ փողոց 8

ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Լիճք Ա-2 թաղամաս 12-րդ փողոց 8

Իրավունք ունի իրականացնելու

Նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Լ. Մկրտչյան

«16» հունիսի 2017 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ընդհանուր՝ 1-ին աստիճան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0393

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «16» հուլիսի 2010 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ ընդհանուր՝ 2-րդ աստիճան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0387

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «16» հուլիսի 2010 թ.

Անժամկետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ընդհանուր՝ 3-րդ աստիճան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0316

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Լիճք

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան

Կ.Տ. «16» հուլիսի 2010 թ.

Անժամկետ

## 3. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԾՈՒԹՅՈՒՆ

**Առկա իրավիճակի հստակեցման նպատակով և, նաև, խնդիրներին այլ տեսանկյունից  նայելու նպատակով,հանդիպել եմ սույն դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհրդի հետ և լսել բարձրաձայնվող խնդիրները, որոնք , միանգամայն, հաշվի եմ առել  նպատակների շարադրման ժամանակ:**

### 3.1. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցչի սկզբունքն է, որքան հնարավոր է շատ կիրառելի  գիտելիքներ հաղորդել աշակերտներին, դասը բացատրել մատչելի, դյուրըմբռնելի՝ օգտագործելով դասավանդման նորագույն մեթոդներ: Ահա այս ամենից է զգալիորեն կախված ուսումնադաստիարակչական  գործընթացի որակը և մեր գրանցած քանակական և որակական  արդյունքներըը:

Աշակերտների թիվը 2023-2024 ուստարում ըստ կիսամյակների՝ առաջին կիսամյակի

սկզբին 753 աշակերտ, իսկ առաջին կիսամյակի ավարտին 753 աշակերտ, որից 383 հոգին տղա, իսկ 370 աղջիկ , երկրորդ կիսամյակի սկզբին 753 աշակերտ, այժմ 750:

*Դիագրամ 1. աշակերտների քանակն ըստ սեռային բաշխվածության*




Որակ-առաջադիմություն

| Հ/Հ | Ուստարի | Տարրական Որակ/առաջ. | Հիմնական Որակ/առաջ. | Ընդհանուր Որակ/առաջ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2021-2022 | 75,4/ 100% | 47/100% | 40,9/ 100% |
| 2 | 2022-2023 | 82,6/ 100% | 43,7/100% | 45,1/100% |
| 3 | 2023-2024 | 75,2/ 100% | 48,09/100% | 38,1/100% |

2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ամփոփում՝

Գերազանց՝ 86 աշակերտ

Հարվածային՝ 221:




*Դիագրամ 2. գերազանցիկների և հարվածայինների թվի ներկայացում*

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ընդհանուր թիվը 750աշակերտ, 30 դասարան `

- 2 **առաջին** դասարան /25,28 աշակերտներով/ ընդ. թիվը 53 աշակերտ
- 2   **երկրորդ** դասարան/ 27,21 աշակ./ ընդ. թիվը 48 աշակերտ
- 2 **երրորդ** դասարան/35,31/ընդ. թիվը 66 աշակերտ
- 2 **չորրորդ** դասարան/28,27/ընդ. թիվը 55 աշակերտ
- 3 **հինգերորդ** դասարան/28,20,26/ընդ. թիվը  74 աշակերտ
- 3 **վեցերորդ** դասարան /26,25,20/ընդ. թիվը 71 աշակերտ
- 3 **յոթերորդ** դասարան /20,28,23/ընդ. թիվը 71 աշակերտ
- 3 **ութերորդ** դասարան /28,21,24/ընդ. թիվը 73 աշակերտ
- 3 **իններորդ** դասարան /24,27,28/ընդ. թիվը 79 աշակերտ
- 3 **տասներորդ** դասարան /23,24,17/ ընդ.թիվը 64 աշակերտ
- 2 **տասնմեկերորդ** դասարան /25,22/ընդ. թիվը 47 աշակերտ

- 2 **տասներորդ** դասարան/26,23/ընդ. թիվը 49 աշակերտ

| Ցուցանիշը | 20120-2021 Ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 | 2023-2024 Ուստարի |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | | 817 Առաջադիմություն 100% Որակ 50.4% | 785 Առաջադիմություն 100% Որակ 51.59% | 753, որից 383 տղա և 370 աղջիկ Գերազանց 86 աշակերտ Հարվածային 221 Առաջադիմություն 100% Որակ 40,77% |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | | 811 | 786 | Այժմ 750 աշակերտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | | | | 11 |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | | | | 14 |

Դպրոցում կա ձևավորված ավանդույթ , որի շրջանակներում ուսման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար ամենամյա վիկտորինաներ են կազմակերպվում զուգահեռ դասարանների, նախապես ընտրված խմբերի միջև, ընթերցանության վերաբերյալ հետաքրքրությունը մեծացնելու համար գրադարանավարի ջանքերով պարբերաբար կազմակերպվում են գրքերի քննարկումներ, բաց պարապմունքներ, ինչպես նաև վիկտորինաներ, 2024թ. «Ինձ բահ տվեք» գրքի շուրջ կայացած վիկտորինայում հաղթող թիմը /10 աշակերտ/հովանավորի աջակցությամբ ստացավ Երևան պարկի այցելության անվճար տոմսեր: Մրցույթի մասնակիցները մեկ ամսում պետք է կարդային Ստեփան և Կարո Պողոսյանների «Ինձ բահ տվեք» գիրքը: Կարդալուց հետո, վիկտորինայի ձևաչափով, աշակերտներին տրվելու էր վերոհիշյալ գրքից 26 հարց. ամենաշատ միավորներ վաստակած թիմը կարժանանար գլխավոր մրցանակին` մեկ ամբողջ օր Yerevan Parkում:

| Ցուցանիշներ | 2022-2023 ուսումնական տարի | | | 2023-2024 ուսումնական տարի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-4 դաս. | 5-9 դաս. | 10-12 դաս. | 1-4 դաս. | 5-9 դաս. | 10-12 դաս. |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվն ըստ կրթական աստիճանների | 85 | 55 | 26 | 41 | 48 | 14 |
| Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների | 0 | 0 | 21 | 0 | 0 | 20 |
| Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ | | | 21<br>39,6 % | | | 20<br>40,8 % |
| Ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ | | | 3<br>5,6 % | | | 4<br>8,1 % |
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների | | 4<br>5,6% | | | 14<br>17,7 % | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| թիվը և տոկոսը | | | | | | |
| Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում | | 67<br>94,3 % | | | 65<br>82,2 % | |
| Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը | | | 7<br>13,2% | | | 12<br>24,4 % |
| Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ | | | 18<br>33,9 % | | | 16<br>32,6 % |

*Մասնակցություն օլիմպիադաներին*

1.2022-2023 ուստարվա ընթացքում դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Գայանե Մկրտչյանը հաղթահարել է պատմության օլիմպիադայի մարզային փուլը և հանրապետական փուլում արժանացել է գովասանագրի:

2.Շիրակացու ճեմարանի կողմից կազմակերպված <<Բաց օլիմպիադա 2023>> հանրապետական օլիմպիադայում դպրոցի աշակերտներից

- Աշոտ Սիրականյանը ստացել է  բնագիտությունից դիպլոմ 2-րդ կարգ
- Մարտիրոսյան Ռոզա հայոց լեզու դիպլոմ 3-րդ կարգ
- Մովսիսյան Արնիկ հայոց լեզու դիպլոմ 3-րդ կարգ
- ևս 13-ը գովասանագիր:

3.2023-2024 ուս.տ.3 աշակերտուհի Աննա Ալեքսանյան ՝ ռուսաց լեզու, Գայանե Մկրտչյան ՝ Հայոց պպատմություն,Արմինե Սիրականյան ՝հայոց լեզու , հաղթահարել են մարզային փուլը և հանրապետական փուլին մասնակցելու ուղեգիր վաստակել, արդյունքում Գայանե Մկրտչյանը արժանացել է գովասանագրի:

4.2024 թ. ԵՊՀ կազմակերպած ամենամյա օլիմպպիադայում  Աննա Ալեքսանյանը վաստակել է 3-րդ կարգ:

2023-2024 ուս տարվա ավարտին դպրոցն ունեցել է 112 գերազանց առաջադիմությամբ աշակերտ, 215  հարվածային , արդյունքում  եղել է 100 % առաջադիմություն, 50,38 %  որակ

Դպրոցը  աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար: Այս ամենին պետք է նպաստեն արտադասարանական, արտադպրոցական խմբակները, առարկայական նախագծերն ու ուսուցիչների անհատական և, ինչու չէ նաև, խմբային մոտեցումները: Դպրոցն ունի այդ փորձն և շարունակաբար կիրառելու է էլ ավելի մեծացնելու աշակերտների ձգտումը սովորելու և իրենց սովորածն վերարտադրելու և կիրառելու համար:

Այդ են վկայում  առարկաների մեծ մասի տարեկան միջին և քննական գնահատականները, միջին մասնագիտական տարբեր կրթական հաստատություն-ներ,  ԲՈՒՀ  ընդունվող սովորողների թիվը:

4-րդ  դասարան  մայրենի 8,3% , մաթեմատիկա `8,025%

9-րդ  դասարան ռուսաց լեզու  14,5%

9-րդ դասարան բնագիտություն 14,5%

9-րդ դասարան  մաթեմատիկա 12,2%

9-րդ դասարան հայոց լեզու 13%

9-րդ դասարան հայոց պատմություն 14,8%

9-րդ դասարան գրականություն 13,4%

9-րդ դասարան ֆիզկուլտուրա 8,5%

12-րդ հյոց լեզու և գրակ.11,2%

12-րդ հայոց պատմություն  15,5%

12-րդ մաթեմատիկա 14,05%

Դիմորդների թիվը 2023-2024 ուսումնական տարում՝ 20,

Դպրոցի կրթության որակի առավել վստահելի ցուցանիշներից կարելի է նշել աշակերտների մասնակցությունն առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին և առանձին մրցույթներին, որտեղ սովորողներն արժանացել են մրցանակների, գրավել պատվավոր տեղեր և այլն: Դպրոցն նախորդ 5 տարիներ ընթացքում արձանագրել է հաջողություններ մասնավորապես մաթեմատիկա, պատմություն, ռուսերեն, հայոց լեզու , բնագիտություն առարկաներից մասնակցելով տարբեր մրցույթների և օլիմպիադաների:

| Հայոց լեզվի գրավոր աշխատանքների արդյունքներ»26» Ապրիլ 2024թ. | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «Լիճքի Հովի.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | | | | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդհ.թիվն ըստ դասարանների | | | | | | | |
| | | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 74 | 71 | 71 | 73 | 79 | 64 | 47 | 49 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 16 | 15 | 12 | 10 | 14 | 11 | 15 | 8 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 27 | 28 | 27 | 31 | 29 | 26 | 22 | 18 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր | 28 | 24 | 23 | 26 | 36 | 24 | 10 | 20 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ստացածների թիվը | | | | | | | | |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | 3 | 4 | 9 | 6 | 0 | 3 | 0 | 3 |

| Մաթեմատիկա գրավոր աշխատանքների արդյունքներ»29» Ապրիլ 2024թ. | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «Լիճքի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | | | | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդհ.թիվն ըստ դասարանների | | | | | | | |
| | | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 74 | 71 | 71 | 73 | 79 | 64 | 47 | 49 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 14 | 12 | 10 | 11 | 10 | 12 | 12 | 8 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 29 | 29 | 21 | 30 | 27 | 26 | 25 | 15 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | 27 | 24 | 35 | 25 | 38 | 25 | 10 | 24 |
| | Ստուգման ընթացքում տրված գրավոր | 4 | 6 | 5 | 7 | 4 | 3 | 0 | 2 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | | | | | | | | |

| Հայոց լեզվի գրավոր աշխատանքների արդյունքներ<br>14 հոկտեմբեր 2024թ. | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովh. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդh.թիվն ըստ դասարանների | | |
| | | IXա | IXբ | IXգ |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 27 | 18 | 22 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 2 | 2 | 2 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 7 | 6 | 6 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | 16 | 10 | 11 |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | 2 | - | 3 |
| Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը<br>(50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5) | | 5 | 5 | 4 |

| Մաթեմատիկայի գրավոր աշխատանքների արդյունքներ<br>14 հոկտեմբեր 2024թ. | | | | |
|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդհ.թիվն ըստ դասարանների | | |
| | | IXա | IXբ | IXգ |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 26 | 18 | 21 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 0 | 0 | 0 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 5 | 0 | 4 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | 14 | 8 | 10 |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | 7 | 10 | 7 |
| Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը<br>(50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5) | | 3 | 0 | 2 |

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհաննես Թումանյանի

| Մաթեմատիկայի գրավոր աշխատանքների արդյունքներ<br>14 հոկտեմբեր 2024թ. | | | |
|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդհ.թիվն ըստ դասարանների | |
| | | IV ա | IV բ |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 35 | 30 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 1 | 0 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 14 | 1 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | 17 | 13 |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | 3 | 16 |
| Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը<br>(50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5) | | 5 | 0 |

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհաննես Թումանյանի

| Թելադրության արդյունքներ<br>14 հոկտեմբեր 2024թ. | | | |
|---|---|---|---|
| Ուսումնական հաստատության անվանումը՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | | | |
| Բնութագրիչներ | | Սովորողների ընդհ.թիվն ըստ դասարանների | |
| | | IV ա | IV բ |
| 1 | Ստուգման ընթացքում տրված աշխատանքներին մասնակցած սովորողների թիվը | 35 | 30 |
| 2 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 9-10 միավոր ստացածների թիվը | 3 | 2 |
| 3 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 7-8 միավոր ստացածների թիվը | 15 | 11 |
| 4 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 4-6 միավոր ստացածների թիվը | 15 | 15 |
| 5 | Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից 1-3 միավոր ստացածների թիվը | 2 | 2 |
| Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (1-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային միավորը<br>(50% և ավելին՝ 0, 41-49%՝ 1, 31-40%՝ 2, 21-30%՝ 3, 11-20%՝ 4, 0-10%՝ 5) | | 5 | 5 |

**Կրթության բարձր որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.**

1. Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան,
2. Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը,
3. Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ,
4. Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը,
5. Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր:
6. Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը:
7. Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ:
8. Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը:
9. Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

Սովորողների համար ապահովված են բոլոր պայմաններն իրենց առաջարկությունները,նախաձեռնությունները ներկայացնելուհամար, սակայն դրսևորվել է պասիվ մոտեցում, մասնավորապես ցուցանիշները ներկայացված են աղյուսակում՝

| Ցուցանիշներ | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցությունն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը | 0 | 0 | 0 |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը | 0 | 0 | 2 |
| Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը և մասնակից սովորողների տոկոսը ընդհանուր թվի նկատմամբ | 2<br>10 % | 4<br>12 % | 8<br>21 % |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը | 0 | 1 | 2 |

Սովորողները ներառված են իրենց կրթական, սոցիալական, առողջապահական շահերի պաշտպանությանն ուղղված մի շարք միջոցառումներում, որոնց շրջանակներում վերջին երկու ուսումնական տարիներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

2022-2023 ուսումնական տարում իրականացվել են մի շարք բազմաբնույթ միջոցառումներ: Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարում սեպտեմբերի մեկին

1-ին և 12-րդ դասարանների մասնակցությամբ իրականացվել է «Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառում, որն ավարտվել է զերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների գովասանագրերով պարգևատրմամբ: Արդեն երկար տարիներ է սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության անկախության օրվա դպրոցում կազմակերպվում է մի շարք միջոցառումներ,Արցախյան 44-օրյա պատերազմի նահատակներին հարգանքի տուրք մատուցելու կապակցությամբ սեպտեմբերի 27-ին կազմակերպվում է մոմավառություն գյուղի կենտրոնում գտնվող հուշարձան-կոթողում: Միջոցառմանը մասնակցում են նաև համայնքի բնակչությունը:

Այս տարի դպրոցում կազմակերպվել է Ոսկե աշուն խորագիրը կրող միջոցառում, որի շրջանակներում աշակերտները հանդես են եկել տարբեր նախաձեռնությամբ՝ գունազեղ սեղաններ, երգ, պար , ձեռքի աշխատանք

Տարրական դասարանների երեխաները յուրաքանչյուր տարի կազմակերպում են միջոցառումներ նվիրված Ամանորին, ինպես նաև հեքիաթներ են բեմադրում :

Հիմնական և ավագ դասարանների աշակերտները կազմակերպել են միջոցառումներ մարտի 8-ի և ապրիլի 7-ի կապակցությամբ:

Յուրաքանչյուր տարի միջոցառումներ են կազմակերպվում ապրիլի 24-ին հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին, որն ավարտվում է մոմավառությամբ:

Ամեն տարի ավանդույթի համաձայն կազմակերպվում են միջոցառումներ նվիրված Մայիսյան հաղթանակներին

Ուսումնական տարվա ավարտին 12-րդ դասարանի աշակերտները կազմակերպում են Վերջին զանգի միջոցառում:

Ուսումնական տարվա ընթացքում դասղեկների կողմից տարբեր դասարանների աշակերտների ներգրավմամբ կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ նվիրված անվանի մարդկանց և այլ հիշարժան օրերին:

Միջոցառումներ նվիրված Պարույր Սևակի 100, Թումանյանի 155 ամյակին

2007թ –ից դպրոցում անցկացվում է մինի ֆուտբոլի տարածաշրջանային հուշամրցաշար ի հիշատակ բազմավաստակ մանկավարժ Գվիդոն Սմբատյանի

Ամենամյա ավանդույթ է դպրոցու անցկացվող բասկեդբոլի ներդպրոցական հուշամրցաշարը նվիրված անվանի մանկավարժ Յուրիկ Սիմոնյանի հիշատակին

2018թ-ից դպրոցի ավանդույթներից է բազմավաստակ մանկավարժ Սերյոժա Գևորգյանի հիշատակին նվիրված 2 ամսում միայն գերազանց խորագիրը կրող ներդպրոցական միջոցառումը, որի հաղթողները վաստակում են անվճար էքսկուրսի Հայաստանի տարածքում

Դպրոցի մշակութային ավանդույթներից է երգի փառատոնը , որն անցկացվում է մեծ ոգևորությամբ , միջոցառման միջոցով հայտարարվում են տաղանդավոր երեխաները և պարգևատրվում դպրոցի կողմից:

Միջանցքներում փակցվում են և պարբերաբար թարմացվում են պատի թերթերը և պաստառները, որոնք հիմնականում պատրաստվում են աշակերտների կողմից:

2023-2024 ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են ըստ աշխատանքային պլանի և համադպրոցական միջոցառումների գրաֆիկի, որը ուսումնական տարվա սկզբում հաստատվել է տնօրենի կողմից:

2023թ. սեպտեմբերի 1-ին կազմակերպվել է Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում և առաջին դասարանցիների ընդունելություն:

Իրականացվել են մոմավառություններ արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի, Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, որոնց մասնակցություն են ունեցել 5-12-րդ դասարանների աշակերտները:

Աշակերտական խորհուրդի կողմից կազմակերպվել է ասմունքի մրցույթ Պարույր Սևակի 100 ամյակին նվիրված, արդյունքում հաղթող է ճանաչվել 10-րդ Ա դասարանի աշակերտուհի Կիմա Իսպիրյանը:

Դպրոցի աշակերտները Դակի, դասղեկների աջակցությամբ կազմակերպել են միջոցառում հայոց բանակի կազմավորմանը նվիրված՝ «Մենք անմահ ենք» խորագրով:

Ուսումնական տարվա ավարտին 4-րդ դասարանի աշակերտների կողմից կազմակերպվել է ավարտական միջոցառում «հրաժեշտ տարրական դպրոցին» խորագրով:

2023-2024 ուսումնական տարում աշակերտական խորհրդի կողմից կազմակերպվել է հուշանվերների պատրաստում և վաճառք, որից ստացված ողջ գումարը ծախսվել է ամանորյա տոնածառի զարդարմանը:

Դպրոցի աշակերտները ընդգրկված են նաև արտադպրոցական սպորտային խմբակներում և տարբեր մարզական միջոցառումներում արձանագրում եմ հաջողություններ, որպես օրինակ 2024 թվականի մայիսին կայացած 40 կգ քաշային կարգում ՀՀ կրտսեր տարիքի պատանիների բռնցքամարտի մրցաշարում դպրոցի 8 -րդ Բ դասարանի աշակերտ էրիկ Մնոյանը հաղթել է իր մրցակցին մարզիկին և զբաղեցրել 3-րդ հորիզոնականը:

Դասարանների ծնողական խորհուրդների անդամների, դասղեկների, Դակի-ի կողմից կազմակերպվել են թեմատիկ էքսկուրսիաներ և այցելություններ դեպի թանգարաններ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված բաժանորդագրերով:

Դպրոցում մեծ աշխատանքներ են տարվում ազգային երգ ու պարի զարգացման ուղղությամբ, և բոլոր միջոցառումները դպրոցի երաժշտության ուսուցչի ջանքերով լրացվել են ազգային երգ ու պարով:

2023-2024 ուսումնական տարում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքները նպաստել են սովորողների բարոյական, առողջապահական, հայրենասիրական, ազգային մշակույթի պահպանման, ազգային արժեքների ձևավորման գործին:

Դպրոցի աշակերտները հաճախակի մասնակցում են հանրապետական, մարզային, տարածաշրջանային միջոցառումների, որի մասին են փաստում հետևյալ միջոցառումների մասնակցությունը

- 2023թ. մայիսի 20-ին դպրոցի աշակերտները մասնակցել են Մարտունի քաղաքում <<Հզոր միտք և Հայ ասա >>թիմի համատեղ կազմակերպված MIF 23I Մարտունի ինովացիոն ֆեստիվալին
- 2022 թ.    դպրոցի  15 աշակերտ, իսկ 2023թ ապրիլ-մայիս  ամիսներին 12 աշակերտ մասնակցել է<< Սևանի ընկերներ>> կազմակերպության կողմից կազմակերպված Սևանա լճի հիմնախնդիրների և լուծումների վերաբերյալ մեկնարկած թեմատիկ վեբինարներին և գործնակն պարապմունքներին , նույն ծրագրի շրջանակներում թիմի անդամները գրել են բնապահպանական հեքիաթներ , որոնք  2024թ  մարտ ամսին հրատարակվել են կազմակերպությն կողմից: Որպես համահեղինակ՝   Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջն. դպրոցում գործող «Սևանի ընկերներ» թիմը մասնակցեց  Շրջակա միջավայր և առողջություն ՀԿ-ի կողմից նախաձեռնած «Բնապահպանական հեքիաթներ» գրքի շնորհանդեսին:

- Ամեն տարի ռուսաց լեզվի ուսուցչի ջանքերով աշակերտները մասնակցում են<< Մոսկվայի տուն>> և <<Ռոսսոտռուդնիչեսվո Հայաստան>>ի Երևանում պարբերաբար անցկացվող մրցույթներին, ակտիվության համար դպրոցը ստացել է շնորհակալագրեր ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի կողմից:2023թ Հիշողության զնացք կրթա-մշակութային ծրագրում մարզում հաղթող է ճանաչվել դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Աննա Ալեքսանյանը և մեկնել Մոսկվա, իսկ 2024 թ  մարտի 1-8 մասնակցել է Սոչիում կայացած <<Համաշխարհային երիտասարդական>> փառատոնին:
- ՀՀ դպրոցականների ֆուտբոլի մարզային փուլում դպրոցի 10,13 և 14 տարեկանների  թիմը գրավել է առաջին պատվավոր տեղը, իսկ հանրապետությունում 2-րդ տեղը
- Գեղարքունիքի մարզի մինչև 8, 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2024 թվականի մարզային առաջնությունում մինչև 12 տարեկանների խմբում 1-ին տեղը գրավել է  դպրոցի 6-րդ Բ դասարանի

աշակերտ Գարիկ Խաչատրյանը, իսկ մինչև 14 տարեկանների տարիքային խմբում 3-րդ մրցանակային տեղը՝ Ռազմիկ Սիրականյանը:

**Իրականացված միջոցառումների տվյալներ**

2023-2024 ուս.տարի

| Ամիս/ամսաթիվ | Խորագիր | Կազմակերպիչներ |
|---|---|---|
| 1.09.2023 | Գիտելիքի օր | ԴԱԿ |
| 22.09.2023 | Անկախ Հայաստան | ԴԱԿ,դասղեկներ |
| 4.10.2023 | Իմ ուսուցիչ | ԴԱԿ |
| 20.10.2023 | Ոսկե աշուն | ԴԱԿ,դասղեկներ |
| 17.11.2023 | Սևակ 100 | ԴԱԿ |
| 22.12.2023 | Ամանորյա ցուցահանդես | ԴԱԿ, ԱԽ |
| 8.01.2024 | Սուրբ ծննդյան հրաշքը | ԴԱԿ,ԾԽ,ԱԽ |
| 29.01.2024 | Հայոց բանակ | ԴԱԿ,ԾԽ,դասղեկներ |
| 16.02.2024 | Թումանյանական երեկո | ԴԱԿ,ԱԽ |
| 11.03.2024 | Մայրիկ | Դասղեկ, ԴԱԿ,ԾԽ |
| 8.04.2024 | Վերփոխում | ԱԽ, դասղեկներ |
| 10.05.2024 | Մայիսը հաղթանակների ամիս | ԴԱԿ,դասղեկներ |
| 24.05.2024 | Վերջին զանգ | ԴԱԿ,ԾԽ,դասղեկներ |

Հայաստանն արդեն իսկ որդեգրել է սոցիալական նոր քաղաքականության ռազմավարությունը, համաձայն որի՝ խնդիր է դրված ուսուցման միջոցով հզորացնել սոցիալական դժվարություններ ունեցող անձանց մասնագիտական գիտելիքները և կարողությունները՝ հնարավորություն ընձեռելով կրթությունը շարունակելու և

աշխատաշուկա մուտք գործելու: Մեր խորին համոզմամբ վերը թվարկված հիմնախնդիրների լուծում կարող է հանդիսանալ հետևյալ ռազմավարական ուղղությունների ամբողջական իրագործումը.

1) վերանայել և մշակել լրացուցիչ կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը,

2) ստեղծել համագործակցության մեխանիզմներ՝ լրացուցիչ կրթության կառավարման գործընթացում սոցիալական գործընկերության սկզբունքի ապահովման համար,

3) բարձրացնել լրացուցիչ կրթության գրավչությունը և ուսումնառության հնարավորությունների մասին հանրության իրազեկվածության աստիճանը,

4) ձևավորել ուսումնառության բաց միջավայր՝ կիրառելով կրթության և ուսուցման ավանդական և ոչ ավանդական ձևերն ու եղանակները,

5) մշակել լրացուցիչ կրթությունն ապահովող ուսումնամեթոդական բազա, կարճաժամկետ ուսուցման ծրագրեր,

6) կատարելագործել լրացուցիչ կրթություն ապահովող մանկավարժական աշխատողների, մասնագետների, փորձագետների, ինչպես նաև մոնիտորինգ և վերահսկողություն իրականացնող անձանց (կազմակերպությունների) կարողությունները, ցուցաբերել ուսումնամեթոդական և տեխնիկական օժանդակություն,

7) իրականացնել ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների կենտրոնացված ճանաչում,

8) ապահովել կրթության և ուսուցման հավասար մատչելիությունը հասարակության բոլոր անդամների համար՝ սոցիալական հավասարության, մասնագիտական առաջընթացի և զբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով,

9) մշակել և գործարկել սոցիալապես խոցելի խմբերի և անմրցունակ անձանց կարողությունների հզորացմանը միտված փորձարարական ծրագրեր՝ նրանց մասնակցային հնարավորությունները բարձրացնելու համար,

10) բարելավել ուսումնառության որակն ու արդյունավետությունը հասարակության անընդհատ փոփոխվող նոր պահանջների և ուսուցման մոդելների փոփոխության հաշվառմամբ:

Ըստ սույն ծրագրի Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում գիտելիքահենք տնտեսության ձևավորումը հիմնված է լինելու, մասնավորապես, մարդկային ռեսուրսների, հետազոտությունների և մշակումների, գիտաինովացիոն գործունեության շարունակական զարգացման վրա: Այս տեսանկյունից առավել կարևորություն է ստանում լրացուցիչ և շարունակական կրթության զարգացումը և դրա գործնական կիրառության ռազմավարական ու իրավական հիմքերի ստեղծումը և այս նպատակով կարևոր ենք համարում խմբակների ստեղծումը,իսկ առկա և գործող երկու խմբակները կարիք ունենք կատարելագործման և ընդլայման:

Դպրոցը միահերթ է, հնգօրյա: Ուսուցանվող օտար լեզուներն են գերմաներենը և ռուսերենը: Աշակերտները 2023-2024 ուստարվա ընթացքում մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքներ, մասնավորապես 5-րդ և 7-րդ դասարաններում ՝ ՀՊՉ -ի ներդրմամբ պայմանավորված: Պատմության /Մկրտչյան Գայանե, արժանացել է գովասանագրի/ և հայոց լեզվի / Սիրականյան Արմինե/օլիմպիադայի հանրապետական փուլ են անցել 2 աշակերտ: Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի ֆեյսբուքյան էջը ՝
https://www.facebook.com/profile.php?id=100092273243410&sk=about&locale=ru_RU

Դպրոցում գործում է առարկայական 7 մասնախումբ.

- Հայոց լեզու և գրականություն՝ Քնարիկ Առաքելյան /Ցանդամ/

- Օտար լեզուներ՝ Ռ.լեզու, Գերմաներեն և անգլերեն՝ Հեղնար Սմբատյան/8անդամ/
- Մաթեմատիկա և ինֆորմատիկ՝ Պարուսիկ Գալստյան/9անդամ/
- Քիմիա, կենսաբանություն և ֆիզկուլտուրա՝ Ալինա Հովհաննիսյան/7 անդամ/
- Պատմություն և աշխարհագրություն՝ Ժուլետա Սարգսյան/6 անդամ/
- Ֆիզիկա, տեխնոլոգիա, ՆԶՊ՝ Ռոզա Բալաբեկյան/7 անդամ/
- Տարրական դասարաններ՝ Ռախսա Մինասյան/9անդամ/

Կամավոր ատեստավորում անցած 7ուսուցիչների ցուցանիշները ներկայացնենք դիագրամի միջոցով: Ուսուցիչներից մեկը չի հաղթահարել անցողիկ շեմը:




***Դիագրամ 3.կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների տոկոսային հարաբերությունը***

Աշակերտները 2023-2024 ուստարվա ընթացքում մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքների

- ՀՊՉ –ի պահանջներին համաձայն իրականացվել է 3 նախագծային աշխատանք հայոց լեզու և գրականություն առարկայից `

1.**Համո Սահյան**, որին մասնակցել են 28 աշակերտ, նրանցից 9 աշակերտ ստացել է 9, 3 աշ. 8, 4 աշ.7, 4աշ.6,6 աշ. 5 և 2 աշ.4,

**2.Լիճք գյուղի բարբառները և ձեւերը**` մասնակցել է 23 աշակերտ ,որից 12 աշակերտ ստացել է 9,7 աշակերտ 8,1 աշակերտ 7,3 աշակերտ 6,

**3.Իմ բնակավայրի հատուկ անունների գրության օրինաչափությունները** և ունեցել հետևյալ արդյունքները ` մասնակցել է 20աշակերտ, որից 7 հոգի ստացել է 9, 3 հոգի 8, 7 հոգի 7 և 3 հոգի 5

- ԿԶՆԱԿ հիմնադրամի հայտարարված հանրապետական նախագծերին `**Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը**,որի շրջանակներում դպրոցի 13 աշակերտներ նախագծի արդյունքում ստեղծվել է իրազեկման սոցիալական հոլովակ , **Պատմաբանի օր**` մասնակցել են 6-րդ Ա դասարանի բոլոր աշակերտները, արդյունքում ստեղծել են Արտաշեսյանների ժամանակաշրջանին վերաբերող մնայուն պաստառ, որը որպես ուսումնական նյութ օգտագործվում է դպրոցու, նույն նախագծի շրջանակներում 9-րդ դասարանի աշակերտները հանդես են եկել վիկտորինայի տեսքով
- ՀՀ ԿԳՄՍ հայտարարված «Հայրենիքը պետություն է» խորագիրը կրող հանրապետական նախագծին , արդյունքում ստեղծվել է հետաքրքիր տեսանյութ Լիճք բնակավայրի մասին

Դպրոցում գործում է 2 խմբակ ` Առողջ ապրելակերպ և Մասնագիտական կողմնորոշում

Առողջ ապրելակերպ խմբակում ընդգրկված են 7-րդ դասարանի բոլոր աշակերտները `71, խմբակի շրջանակներում աշակերտները կատարում են բազմապիսի գործնական պարապմունքներ և հետաքրքիր քննարկումներ, խմբակի

նպատակն `սովորողների շրջանում ձևավորել դրական վերաբերմունք առողջ սննդային վարքագծի, ֆիզիկական ակտիվության և սպորտի վերաբերյալ: Ներկայացնել առողջ սնուցման սկզբունքները, օգնել տարբերակել հիմնական սննդային խմբերը, պատկերացում կազմել օրգանիզմի սննդանյութերի օրական պահանջների վերաբերյալ՝ կախված տարիքից, քաշից, ֆիզիկական ակտիվությունից և առողջական խնդիրներից:

Մասնագիտաան կողմնորոշման խմբակում ընդգրկված են 20 աշակերտ, խմբակի գլխավոր նպատակն է աշակերտին օժտել շարունակական ուսուցման և կարիերայի զարգացման այնպիսի կարողություններով , որոնք նրան հնարավորություն կտան ընտրելու աշխատաշուկայում մրցունակ մասնագիտություն և ձեռք բերելու աշխատանք գտնելու գրավական :

Խմբակի շրջանակներում աշակերտները մասնակցում են տարբեր համաժողովների , այցելում են տարբեր աշխատատեղեր , ծանոթանում տարբեր մասնագիտությունների հետ, գնահատում իրենց կարողությունները և  ընտրում իրենց ապագա մասնագիտությունները:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| ➢ Աշակերտները 2023-2024 ուստարվա ընթացքում մասնակցել են տարբեր նախագծային աշխատանքների, մասնավորապես 5-րդ և 7-րդ դասարաններում ՝ ՀՊՉ -ի ներդրմամբ պայմանավորված:<br>➢ Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի ֆեյսբուքյան էջ:<br>➢ Դպրոցում բոլոր ուսուցիչները ունեն | ➢ Դպրոցում շատ ցածր մակարդակի վրա է գտնվում խրախուսումը:<br>➢ Դպրոցում գործում են ընդամենը 2 խմբակներ:<br>➢ Ուսուցիչները խուսափում են նորարարություններից :<br>➢ Հարակից գյուղերի դպրոցների հետ թույլ համագործակցություն<br>➢ Ծնողների ներգրավվածությունն աշակերտների կրթության |

| | |
|---|---|
Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումը: Սակայն այս սահմանումը, թերևս, թաքցնում է կրթական ներառում երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոփոխվել է, ինչի պատճառով ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարությունների և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ, այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները: Ավելին, ներառական կրթությունը դպրոցներում և համայնքներում հավուր պատշաճի ներդնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականություն մշակողները, համալսարանները, դպրոցները, հասարակական կազմակերպությունները, ծնողները և այլ մասնակիցները ներգրավվեն գործընթացի մեջ: Հայաստանում ներառական կրթության համակարգը որպես ազգային քաղաքականություն, պաշտոնապես ընդունվել է 2003 թ.-ին: Այդ ժամանակից ի վեր տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ նախաձեռնել են նոր ընդունված համակարգին համահունչ զանազան ծրագրեր՝ ուսուցիչներին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին օժանդակելու համար: Այդ ջանքերի շնորհիվ այսօր շատ դպրոցներ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը, սակայն ուսուցիչներից քչերն են մասնակցել այնպիսի վերապատրաստման կամ կրթական ծրագրերի, որոնք թույլ կտան

հանրակրթական դասարաններում իրականացնելու այդ երեխաների կրթական կարիքներին համապատասխան ռազմավարություններ և ծառայություններ։

2021_2022 թթ. ուստարվա սկզբին մեր ուսումնական հաստատությունն ունեցել է 31 ԿԱՊԿՈՒ երեխաներ,իսկ երկրորդ կիսամյակի ավարտին վերագնահատման և ծնողի դիմումի հիման վրա մնացել է 7 երեխա( ինտելեկտուալ, խոսքի, հենաշարժողական , մտավոր, լսողական, տեսողական խնդիրներով)։

2022_2023 ուստարվա սկզբին եղել է 7 երեխա նույն խնդիրներով, իսկ ուս տարվա ավարտին վերագնահատման արդյունքում մնացել է 5 երեխա։

2023_2024 ուստարվա սկզբին և այժմ դպրոցում կա 5 ԿԱՊԿՈՒ երեխա։

1.Խոսքի և լեզվի առաջին աստիճան_ գնահատվել է 14.06.2023 թ. մեր դպրոցում

2.Տեսողության առաջին աստիճան գնահատվել է 5.10.2023թ.

3.Ինտելեկտի(մտավոր) առաջին աստիճան և խոսքի և լեզվի երկրորդ աստիճան գնահատվել է 5.10.2023թ.

4.Ինտելեկտ (մտավոր) երկրորդ աստիճան գնահատվել է 5.10.2023թ.

5.ինտելեկտուալ(մտավոր) երկրորդ աստիճան և շարժունակություն երկրորդ աստիճան գնահատվել է 23.10.2023թ.։

հոգեբան՝ 1 նրա իրականացրած գործառույթները դպրոցում՝

Ախտորոշիչ աշխատանքներ 1_5րդ դասարաններում, հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրում,կանխարգելող աշխատանքներ վնասակար սովորույթների դեմ,դեռահասության դժվարությունների ուսումնասիրում։

Դպրոցում մշտապես խրախուսվել է բազմակարծությունը, և պարբերաբար իրականացվում են բռնության, բուլինգի, օտարման, հալածանքի, ծխախոտի օգտագործման կանխարգելմանն ուղղված միջոցառումներ։ Բարեբախտաբար վերջին

տարիներին դպրոցում բռնության դեպքեր չեն արձանագրվել, մարմնական, ֆիզիկական վնասվածքներ ստացած սովորողներ չկան: Դպրոցում բարոյահոգեբանական միջավայրը կայուն է, իսկ առանձին սովորողների կողմից վարքագծի կանոնների խախտման փորձերը դեռևս կանխարգելվում են վաղ փուլում, և հետևանքներ չեն առաջացել:

## ԿԱՊԿՈՒ երեխաների տվյալները 2024-2025 ուստարվա մեկնարկին.

| Դասարանը | Ֆունկցիոնալ խանգարումները | Գնահատվածության աստիճանը |
| --- | --- | --- |
| 12-րդ | Տեսողական | Ծանր |
| 11-րդ | Ինտելեկտուալ | Միջին |
| 8-րդ | Ձայնի և խոսքի | Թեթև |
| 6-րդ | Ձայնի և խոսքի | Միջին |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| ➢ Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում: ➢ Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ: ➢ Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության | ➢ Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) բացակայում է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիությունը, ➢ Հաստատությունում առկա չեն բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար: |

| | |
|---|---|
| գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին :<br>➢ Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ։<br>➢ Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր։<br>➢ Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման։<br>➢ Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ։<br>➢ Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում են անցել | ➢ Հաստատությունում առկա չեն բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նութեր լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար<br>➢ Հաստատությունը չունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար<br>➢ Հաստատությունում հաղթահարված չեն ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները։ |

| | |
|---|---|
| բոլոր ուսուցիչները։<br>➢ Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հոգեբան,ուսուցչի օգնական),<br>➢ Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն,<br>➢ Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները<br>➢ Անհատական ուսումնական պլանները (ԱՈՒՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը։<br>➢ Բոլոր ուսուցիչներն ունեն դրական դիրքորոշում ներառական | |

| | |
|---|---|
| կրթության նկատմամբ,<br>➢ Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից<br>➢ Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր<br>➢ Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերից է դասագրքերի անվճար տրամադրումը: | |

## 3.7.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի մուտքերի թիվը՝1 հիմնական, 5 պահուստային:

Մասնագիտական դասասենյակների մասին տեղեկություն՝ 2 լաբորատորիա՝քիմիա և ֆիզիկա , որոնք համալրված չեն ժամանակակից սարքերով ու

սարքավորումներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով , առկա է ՆԶՊ-ի դասասենյակ, առկա չէ հրաձգարան և շարային հրապարակ :

Դպրոցի շենքի տիպը՝ տիպային ,

Հարկայնությունը՝ 3,

Պատերը պանելային են, պատուհանների տեսակը մետաղապլաստե ՝ 339 հատ, մեկ պատուհանի միջին մակերեսը 5մ քառ., դռների տեսակը մետաղապլաստե ՝ 130 հատ, միջին մակերեսը 2 մ քառ.,տանիքի տիպը ՝ լանջավոր, տանիքի նյութը ՝ մետաղական, տանիքի մակերեսը 2890 մ քառ., ջերմամեկուսիչ շերտի առկայությունը ամբողջ մակերեսով, ջերմամեկուսիչ շերտի նյութի տեսակը ՝ խարամ, հաստությունը 400մմ.,

Ջեռուցումը կենտրոնացված է,

ջրամատակարարումը շուրջօրյա, տաք ջրի մատակարարումը բացակայում է

,լուսավորությունը լուսադիոդային լամպ, հզորությունը 30.00 Վտ,, ընդ . հզորությունը

2.91 ԿՎտ։

Աշխարհագրական Կորդինատներ ՝

լայնություն՝ 40.164335

երկայնություն՝ 45.238579

Ջեռուցման եղանակը՝ լոկալ,

Առանձնասենյակների թիվը՝9

Դասասենյակների թիվը՝ 35

Լաբորատորիա՝ 2

Հանդիսությունների սրահ ՝1/ 380 մետր քառ.

Նախնական զինպատրաստության՝ 1,

Հրաձգարան՝ -չկա

Համակարգչային կաբինետ՝ 2

Ինտերնետ կապի առկայությունը՝ առկա, բայց համակարգչային դասարաններում չկա

Բացօթյա սպորտհրապարակ՝ երկու հատ մեծ և փոքր՝մինի ֆուտբոլի

Մարզադահլիճ՝ երկու հատ մեծ և փոքր,

Արհեստանոցներ՝ 1,

Բուժկետ՝ մեկ հատ,

Ճաշարան՝ առկա,

Հանդերձարան (ներ)՝2 հատ, կա, բայց վերանորոգված չէ և չի օգտագործվում

Զուգարան (ներ)՝ 12 հատ գործող, 4 հատ չի գործում

Տեխնիկական նշանակության այլ սենյակներ՝ չկա

Մարզահրապարակ(ներ)՝ մեկ

Համակարգիչներ՝ 38 հատ համազարգիչ , որից չեն աշխատում 9-ը և 22 հատ նոթբուք

Համակարգչային այլ տեխնիկա՝ 4 հատ պրոեկտոր, որից 2-ը չի գործում, 1 վեբ տեսախցիկ, մոլբերտ 3 հատ, տպիչ 11 հատ,

Հեռախոսներ՝ չկա

Գրադարան (ներ)՝ 1

Գրադարանի ֆոնդը՝ 7000 գիրք

Աշխատողների թիվը՝ 100

Վարչական աշխատողների քանակը՝ 5

Դասարանների թիվը՝ 30

***Տվյալներ հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ***

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հաստատությունում առկա է բուժկետ | | | | | |
| | | | | | |
| Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն | | | | | |
| | | | | | |
| Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը | Բուժաշխատողներ թիվը և նրանց պաշտոնները | Բուժկետում առկա գույքը | Բուժկետը վերանորոգված է, | Բուժկետի սանիտարական վիճակը | Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը |
| 2_րդ հարկ<br>20մ քառ. | 1,բուժքույր | գրասեղան +<br>աթոռ +<br>դեղորայքի+<br>պահարան +<br>տանոմետր/ճնշ. +/<br>ջերմաչափ+<br>մահճակալ+<br>բժշկական | <u>Այո</u> | Բավարար | Առկա են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կշեռք+ | | | |

***Տվյալներ հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ***

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հաստատությունում առկա է սննդի կետ | | | | | |
| Հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ | | | | | |
| Սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության | | | | | |
| Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան ) | Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ) | Սառը և տաք հոսող ջրի առկայությունը | Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը | Տաք սննդի հնարավորությունը | Վերանորոգված է, թե ոչ |
| Բուֆետ՝ | | Առկա է | Առկա է | Ունի | Վերանորոգ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17,1 կմ քառ. | | | | | ված է |

Ճաշարան 2-րդ հարկ 363մ քառ. Սառը և տաք ջրի առկայություն կա, լվացարանների և հիգենայի պարագաներ կան, տաք սննդի հնարավորություն կա, վերանորոգված է ամբողջությամբ

***Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ***

| Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ | Տարածքը (քմ) | Վերանորոգման կարիքը |
|---|---|---|
| Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ | 90մ քառ. | Վերանորոգված է |
| Քիմիայի լաբորատորիա, կաբինետ | 90մքառ. | Վերանորոգված է |
| Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ | - | - |
| Ռազմագիտության Կաբինետ | 72մ քառ. | Վերանորոգված է |
| Համակարգչային լաբորատորիա, կաբինետ | 110մ քառ երկուսն էլ | Վերանորոգված է |

*Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիայի գույք և դիդակտիկ պարագաներ. լաբարատորիաները ամբողջությամբ վերանորոգված են , բայց վերջին անգամ համալրվել է անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով 80-ական*

*թթ., բացակայում են գրեթե բոլոր անհրաժեշտ սարքավորումներն ու նյութերը փորձեր կատարելու համար:*

***Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին***

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը քմ-ով | 90մ քառ. |
| Ընթերցասրահիհառկայությունը նտարածքը քմ-ով | 36մ քառ. |
| Գրադարանում/ընթերցասրահում միաժամանակ նստելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը | 25-30 |
| Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով | 54մ քառ. |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 1 |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը | չկա |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝ | Մոտ 7000 |
| -գեղարվեստական գրքերի թիվը | Մոտ 5000 |
| -տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/ | Մոտ 500 |
| -ուսումնամեթոդական գրքերի թիվը | 65 հատ |
| -ամսագերի թիվը | 200 |
| -այլ | 1235 |

| | |
|---|---|
| Վերջին անգամ գարդարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը | 16.03.2024 |
| Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը | Վիլյամ Սարոյան, Հովհ. Թումանյան, Շիրվանզադեի Քաոսը, Հովհաննես Շիրազ, Պպարույր Սևակ, Ռիչարդ Բախ, Ագաթա Քրիստի …. |
| Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը | 300 |
| Գրադարանում բաժանորդագրված ուսուցիչների և դպրոցի մյուս աշխատակիցների թիվը | 74 |
| Գրադարանում բաժանորդագրված սովորողների թիվը | Տարրական՝ 120<br>Հիմնական՝ 60-70<br>Ավագ՝ 15 |
| | |

| |
|---|
| Գրադարանը վերանորոգված է  մասամբ |
| Անց կացվում են գրադարանում դասեր և պարապմունքներ |
| Գրադարանավարը չունի համապատասխան բարձրագույն կրթություն |
| Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանվարը չի անցել վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ |
| Գրադարանը չի հանդիսանում  հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և չի օգտվում  նրանց ռեսուրսներից |
| Գարդարանն ունի 100 էլեկտրոնային ռեսուրսներ |
| Սովորողները իրենց տնային հանձնարարությունները կատարելիս օգտվում են գրադարանային ռեսուրսներից |
| Գրադանավարը սովորողներին օգնում է հայթհայթել անհրաժեշտ նյութեր դասարանական և տնային հանձնարարությունների կատարման համար և ընթերցանության գրքերի ընտրության հարցում |
| Սովորողները կարող են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադրանի գրադարակներին/պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ |
| Գրադրանը չունի գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր |
| Գրադանավարը կարողանում է  օգտվել գրադարանավարության |

հատուկ համակարգչային ծրագրից

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| ➢ Վերանորոգված է դպրոցի հիմնական մասնաշենքերը, փոխվել են դպրոցի բոլոր պատուհանները և դռները, կոսմետիկ վերանորոգվել են դպրոցի գրեթե բոլոր դասասենյակները, դպրոցի բոլոր միջանցնքները, պարկետվել են դպրոցի ուսուցչանոցի հատակը և լամինատապատվել տնօրենի կաբինետի և որոշ դասասենյակների հատակները, մետլաղված է ընդունարանի և մի քանի դասասենյակի հատակներըը , ամբողջովին վերանորոգվել է դպրոցի ճաշարանը , վերանորոգվել, բարեկարգվել է դպրոցի սանհանգույցները, փոխվել են սանհանգույցների զուգարանակոնքերը , վերանորոգվել է դպրոցի հանդիսությունների դահլիճը և | ➢ Տաք ջրի մատակարարումը բացակայում է,<br>➢ Վարագույրների բացակայություն հանդիսությունննների դահլիճի բեմահարթակի վրա,<br>➢ ոչ բարեկարգ բակ<br>➢ ոչ բարեկարգ դպրոցի մուտք,<br>➢ Առարկայական սենյակ /կաբինետ, հրաձգարան ՝ առկա չեն:<br>➢ Առկա 4 պրոյեկտորից 2-ը չեն գործում,<br>➢ Քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաները համալրված չեն ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով,<br>➢ Համակարգչային դասասենյակներում և գրադարանում ինտերնետ կապի բացակայություն,<br>➢ Հանդերձարանները վերանորոգված չեն և գործածելի չեն նույնպես:<br>➢ Որոշ դասասենյակներում առկա գույքը հնամաշ է: |

| | |
|---|---|
| կահավորվել նորագույն սարքավորումներ ՝ պրոեկտոր, էկրան, ամբողջությամբ նոր աթոռներով, ամբողջությամբ փոխվել է բեմահարթակը՝ընդարձակվել:<br>➢ Տնկվել են պտղատու ծառեր:<br>➢ Առկա են երկու մեծ և փոքր մարզադահլիճներ,<br>➢ 38 համակարգչի առկայություն ,<br>➢ Առկա են ՝ 2 գործող պրոեկտոր, 1 վեբ տեսախցիկ, մոլբերտ 3 հատ, տպիչ 11 հատ,<br>➢ Գրադարանային ֆոնդը կազմում է 7000գիրք:<br>➢ Ուսումնական հաստատությունն ունի լավ վերանորոգված դասասենյակներ նախակրթարանի համար՝ համապատասխան գույքով:<br>➢ Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին,բոլոր դասասենյակները կահավորված են բավականին | ➢ Քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներում բացակայում են անհրաժեշտ նյութերը ուսումնական գործընթացնավելի լիարժեք դարձնելու համար: |

| | |
|---|---|
| լավ վիճակում գտնվող: | |

## 4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

## 5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ , ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ, ՄԻՋՈՑՆԵՐ,ՉԱՓՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՌԻՍԿԵՐ,ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Նպատակ 1

Կրթության որակի բարձրացում , չափորոշչահեն կրթության լիարժեք ներդրում:

| Խնդիրներ | | |
|---|---|---|
| 1.ՀՊՉ-ն լիարժեքորեն գործի դնելու խնդիր ունենք և այս հարցում կան խոչընդոտներ, որոնցից մեկը հենց տարեց ուսուցիչների կողմից նորարարությունների մերժումն է և դեպի ավանդականի ձգտումը:<br>2. Աշակերտների դպրոցական կյանքի նոր մոդելի կերտման խնդիր ունենք, որը միանգամայն չափելի է , անհրաժեշտ է գործողությունների ձևակերպման ճիշտ քայլաշար:<br>3. ՀՊՉ-ին  համապատասխան կրթության կազմակերպում,<br>4. Կրթության որակի վերանայում և բարելավում,<br>5. ցածր առաջադիմություն ունեցող սովորողների բացահայտում | | |
| *Գործողություններ* | *Միջոցներ* | *Չափման գործիքներ* |
| 1.Խրախուսել մանկավարժներին և մոտիվացնել մասնագիտական որակները բարելավելու համար , ինչպես նաև աջակցել նրանց՝ համագործակցելով տարբեր | Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են ֆինանսական, մարդկային ռեսուրսներ, բացի այդ անհրաժեշտ կլինի համապատասխան մասնագիտական գրականություն, | 1.Մեթոդմիավորման աշխատանքների արդյունքներ,<br>2. Վերապատրաստման արդյունքների արձանագրում, դրական արդյունքների բարձրաձայնում և խրախուսում, |

| | | |
|---|---|---|
| կազմակերպությունների, շահագրգիռ անձանց հետ ուսուցիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարելավման համար, քանի որ հենց վերոնշյալից էլ կախած է կրթության որակի մակարդակը։<br>2.ակտիվացնել փորձի փոխանակումը ուսուցիչների միջև,<br>3. Ցածր արդյունքներ ունեցող սովորողների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում,<br>4. խրախուսել նախագծային աշխատանքների թվի ավելացումը, ուշադրություն դարձնել գրանցած արդյունքներին,<br>5. Վերահսկել սովորողների ուսումնական արտադպրոցական կյանքը և այն դարձնել ավելի գրավիչ։ | ուղեցույցներ, էլեկտրոնային գրքեր ,աշխատանքային պլան , և , իհարկե, աշխատանքային հաճելի միջավայր։<br>Անհրաժեշտ կլինեն նաև ՏՀՏ և ժամանակակից միջոցներ։ | 3.դասալսումների իրականացման արդյունքներ, քննարկում, կլոր սեղանների, բանավեճերի, քննարկումների իրականացում։<br>4. Տարեց ուսուցիչների գրանցած արդյունքներ, աշխատանքի պլանավորում, փորձի փոխանակման արդյունքներ,<br>5. Վերոնշյալ նպատկին հասնելու համար իրականացվող ցանկացած միջոցառման, աշխատանքների արդյունքներ։<br>6. Օլիմպիադաներում , մրցույթներում գրանցած արդյունքներ<br>7. ԿԱՊԿՈՒ սովորողներին կրթական գործընթացներում առավելագույն ներգրավում, աջակցության |

| | | |
|---|---|---|
| 6. վերահսկել երկարօրյա խմբակներում սովորողների աշխատանքը, կատարել անդրադարձ նրանց աշխատանքին։ 7. Ավելացնել չափորոշչահեն կրթությամբ իրականացվող օրինակելի դասերի թիվը և պարբերաբար անդրադառնալ գրանցած արդյունքներին։ 8. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացնել սովորողների գիտելիքների ստուգում, բացահայտել վերջնարդյունքների և կարողունակությունների ձևավորման աստիճանը, արդյունքները քննարկել մեթոդմիավորման նախագահների հետ և դրանք ներկայացնել ուսուցիչներին։ 9. Ավելացնել այն միջոցառումների թիվը , որտեղ սովորողները | | ապահովում։ 8. Վերահսկողության ապահովում, գրանցած արդյունքներ ըստ ՆԴՎ պլանի։ 9. գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծություն։ 10. Նպատակային միջոցառումների կազմակերպման թիվ, արդյունք։ 11. արտադպրոցական խմբակներում ընդգրկված սովորողների թիվը, գրանցած արդյունքը։ 12. Օլիմպիադաներին սովորողների մասնակցության ապահովում , գրանցած արդյունքների քննարկում։ |

| | | |
|---|---|---|
| հնարավորություն ունեն ինչ-որ բան ստեղծել,գործնականում գիտելիքները կիրառել։<br>10.Ըստ անհրաժեշտության ստեղծել խմբակներ։<br>11. Ըստ պահանջի կամ անհրաժեշտության դեպքում հրավիրել մասնագետներ՝ ՀՊՉ-ի լիարժեք ներդրման նպատակով։ | | |

*Ռիսկեր*

1.Մոտիվացիայի ոչ բավարար մակարդակ ուսուցիչների և սովորողների շրջանակում,

2.ոչ բավարար ռեսուրսներ՝ ինչպես մարդկային , այնպես էլ ֆինանսական և նյութական,

3.տեղեկատվական տեխնոլոգիաների յուրացման ցածր մակարդակ ,

4. ՏՀՏ-ից ժամանակակից գործիքակազմից օգտվելու ոչ բավարար հմտություններ,

5. Արտակարգ իրավիճակներ,

6. նորարարությունների մերժում տարեց ուսուցիչների կողմից

7. ցանկացած ցածր արդյունքների անտեսում,քննարկման ենթակա հարցերի անտեսում

| *Կանխարգելման* | *Ժամանակացույց* | *Ակնկալվող արդյունք* |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| *եղանակներ*<br>1. Խրախուսել մեթոդմիավորման նախագահներին `իրականացնելու մի շարք քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր, ունենալ պատրաստակամություն աջակցելու մանկավարժական համակազմին,<br>2. գտնել բարերարների, ովքեր կհովանավորեն և կկարողանան կազմակերպել ուսուցիչների վերապատրաստումները արտասահմանում,ինչը ոչ պակաս մոտիվացնող է և խուստումնալից,<br>3. Հետևողական և արդյունավետ աշխատանքի իրականացում ,<br>6. անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերում և այդ ռեսուրսներով | 2025-2030 թթ.երկարաժակմետ և պարբերաբար:<br>Սակայն հետևողական և արդյունավետ աշխատանքն անհրաժեշտ է սկսել հնարավորին շուտ ` չափորոշչի լիարժեք ներդրման նպատակով: 5 տարիների ընթացքում ոչ մի օր չի կարելի անտեսել վերոնշյալ նպատակը և ամեն օր պետք է ձեռնարկել քայլեր , հետևել նշված գործողությունների իրականացմանը: | Կունենանք ժամանակակից կրթության նոր մակարդակ ապահովող որակ, որը կհամապատասխանի ժամանակի հրամայականին և կլինի դեպի նոր ապագա տանող վստահելի փարոս:<br>Դպրոցում լիարժեքորեն կներդրվի Հանրակրթական պետական չափորոշիչը և կբարձրանա կրթության որակը: |

| | | |
|---|---|---|
| ապահովում,<br>7.վերանայել օրինակելի դասի մոդելը, հորդորել ուսուցիչներին դասերը հագեցնել ՏՀՏ գործիքներով, նոր և ժամանակակից մեթոդներով և վերահսկել մանկավարժների աշխատանքը։<br>8. խրախուսել բարձր արդյունքներ գրանցող ուսուցիչներին<br>9. հորդորելմանկավարժներին պարբերաբար վերապատրաստվել և մասնակցել կամավոր ատեստավորումներին | | |

Նպատակ 2

Հաստատությունում հաղթահարել ներառականությունը խաթարող բոլոր (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները և զարգացնել ներառական կրթությունը, սովորողների համար ստեղծել ապահով միջավայր

| **Խնդիրներ** |
| --- |
| 1.չնայած որ այսօր մեր դպրոցում չկան հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտներ և ԿԱՊԿՈՒ 4 աշակերտները միանգամայն չունեն հենաշարժողական որևիցե խնդիրներ ,այնուամենայնիվ , մեր առջև նպատակ պետք է դնենք նաև առնվազն մուտքի թեքահարթակի ստեղծումը, որպեսզի անհրաժեշտության դեպքում մեր առջև նման խնդիր չծառանա: <br>2.Անհրաժեշտություն կա պարբերաբար իրականացնել  այնպիսի միջոցառումներ , որոնք միտված կլինեն հաստատությունում ներառականությունը խաթարող բոլոր խոչընդոտների վերացմանը և ներառական կրթության զարգացմանը : <br>3.ուսուցիչների պատշաճ վերապատրաստում , <br>4. վերանայել հաստատության  երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրերը, <br>5. բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում: |

| ***Գործողություններ*** | ***Միջոցներ*** | ***Չափման գործիքներ*** |
|---|---|---|
| 1.Մուտքի աստիճանների կողքին կառուցել թեքահարթակ։<br>2. Ավելացնել առաջիկա 5 տարիների ընթացքում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը։<br>3. Անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել հաստատությունում հաղթահարել ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները։<br>4.Վերահսկել անհատական ուսումնական պլանները (ԱՈՒՊ), որոնք մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով | Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են ՝<br>1.մարդկային ռեսուրսներ<br>2.ֆինանսական միջոցներ<br>3.վերապատրաստող կազմակերպություններ,<br>4.ՏՀՏ և նորարարություններ<br>5.ուղեցույցներ և ուսումնակաօժանդակ նյութեր<br>6.ըստ սովորողների կարիքների անհատական միջոցներ<br>7. միջոցառումներ, քննարկումներ, կլոր սեղաններ<br>8. արձանագրություններ, վերլուծություններ<br>9. ԱՈՒՊ<br>10.սոցիալական աջակցության պլան<br>11. թեքահարթակի կառուցման համար շինանյութ<br>12.դպրոցի բանվորական ներուժ<br>13. բուլինգի | 1. թեքահարթակի առկայություն<br>2. ուսուցիչների աշխատանքային պլանում տեղ գտած ներառական կրթության զարգացմանը միտված աշխատանքների գրանցած արդյունքները։<br>3. ընտանիք-դպրոց համատեղ աշխատանքների գրանցած արդյունքները։<br>4. ներառական կրթության իրականացմանը խոչընդոտող հանգամանքների թիվ , նկարագրություն<br>5. Ոչ ցանկալի, բարոյահոգեբանական տհաճ իրավիճակների, բուլինգի տեսակների գրանցման դեպքերի թիվ,<br>6.ԿԱՊԿՈՒ աշակերտների գրանցած արդյունքները,<br>7. բռնության , օտարման, ոչ ցանկալի իրավիճակների |

| | | |
|---|---|---|
| սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը: 5.բացահայտել, թե ուսուցիչներից քանիսն են կարողանում հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում և նույնիսկ սեփական վարքագծում: 7. Վերանայել, ըստ պահանջի իրականացնել փոփոխություններ սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերում: 8. Ուսուցիչները գիտակցելով ներառական կրթության վերաբերյալ | կանխարգելմանն ուղղված պապաստառներ, վիդեոհոլովակներ | կանխարգելմանն ուղղված միջոցառումների թիվը 8.Անչափահասների տեսուչների այցերի թիվը դպրոց 9. միջոցառումների թիվ, որոնց մասնակցել են ԿԱՊԿ ունեցող սովորողները 10. ուսումնական հաստատության կողմից իրականացված՝ ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը 11. ուսուցիչների թիվ ,որոնք ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ 12. ուսուցիչների թիվ, որոնք ունեն բացասական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ 13. սոցիալապես անապահով ընտանիքների թիվ 14. սոցիալապես անապահով ընտանիքներին |

| | | |
|---|---|---|
| կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունից ելնելով ձեռնարկում են համապատասխան քայլեր և սահմանում են գործողությունների քայլաշար: | | աջակցության դեպքերի թիվ<br>15. միջոցառումների թիվ, որոնց մասնակցել են նաև ԿԱՊԿՈՒ սովորողները<br>16.5 տարիների ընթացքում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը<br>17. նպատակի իրականացմանն ուղղված աշխատանքների վերջնարդյունքներ<br>18. բուլինգի կանխարգելման վերաբերյալ ուսումնական նյութերի առկայություն<br>19. դպրոցում բուլինգի դեպքերի քննության մեխանիզմների առկայություն |

| *Ռիսկեր*<br>1.Ոչ բավարար ֆինանսական միջոցներ,<br>2. Ֆորսմաժորային իրավիճակներ,<br>3. ուսուցիչների գերծանրաբեռնվածություն,<br>4. Երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված ծրագրերի ոչ պատշաճ իրականացում,<br>5. անհրաժեշտ մասնագետների պակաս՝ փորձի փոխանակման նպատակով,<br>6. բուլինգի տեսակների դրսևորում<br>7. ոչ բավարար ուշադրության աստիճան մասնակցային միջավայրին, ԿԱՊԿՈՒ սովորողներին: | | |
|---|---|---|
| *Կանխարգելման եղանակներ*<br>1.Բյուջեի օպտիմալ և հետևողական օգտագործում:<br>2. Արտակարգ իրավիճակներում գրագետ գործելու կարողունակությունների ամրապնդում:<br>3. Նախատեսված ծրագրերի կատարողանակի վերահսկում:<br>4. ԿԱՊԿՈՒ աշակերտների գրանցած արդյունքների | *Ժամանակացույց*<br>2025-2028թթ.ցանկալի է այս նպատակին հասնել հնարավորինս շուտ և պարբերաբար վերահսկողության տակ պահել ցանկացած փոփոխությունները: | *Ակնկալվող արդյունք*<br>1.Կունենանք թեքահարթակ,որը կծառայի ըստ անհրաժեշտության:<br>2.Կբարձրացնենք դպրոցում ներառական կրթության որակը:<br>3.Կվերացնենք ներառականությանը խոչընդոտող արգելքները:<br>4. Ճիշտ պահին կկանխենք ոչ ցանկալի արդյունքի տանող քայլերը:<br>5. անհրաժեշտ ուշադրություն, սեր և հոգատարություն |

| | | |
|---|---|---|
| արձանագրում և բացերի լրացմանն ուղղված աշխատանքների սահմանում:<br>5. Անհրաժեշտ ուշադրության տրամադրում մասնակցային միջավայրին և ԿԱՊԿՈՒ աշակերտներին,<br>6. Լրացուցիչ աշխատանքների իրականացում կասկածելի վարքագիծ ցուցաբերող աշակերտների հետ<br>7. բուլինգի դեպքերի կանխարգելում և կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում | | կցուցաբերենք ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ<br>6. Կունենանք բուլինգի ցանկացած տեսակից զերծ ուսումնական միջավայր |

Նպատակ 3

Ուսուցիչների կրթական կարիքների բացահայտում, ինքնակրթության ապահովում,խրախուսման սահմանում:

| Խնդիրներ | | |
|---|---|---|
| 1.Ուսուցիչները մշտապես վերապատրաստվելու, սեփական գիտելիքները հարստացնելու , տարաբնույթ ծրագրերին մասնակցելու կարիք ունենք և սա , թերևս , պետք է մշտապես լինի տնօրենի ուշադրության կենտրոնում, ով նաև պետք է գտնի միջոցներ և եղանակներ բարձր որակավորում ունեցող մասնագետներին խրախուսելու համար:<br>2. ուսուցիչների կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների իրականացում , վերահսկում,<br>3.ուսուցիչների կրթական կարիքների ապահովմանն ուղղված բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում,<br>4. առաջադեմ մանկավարժների փորձի ներկայացում , փոխանակման ապահովում,<br>5.Մանկավարժական համակազմի համակարգչային գիտելիքների հարստացում , ՏՀՏ գործիքների տիրապետում ,<br>6. Մանկավարժների ՀՊՉ-ին լիարժեք տիրապետում: | | |
| *Գործողություններ* | *Միջոցներ* | *Չափման գործիքներ* |
| 1.Հորդորել, աջակցել ուսուցիչներին տարաբնույթ ծրագրերին, վերապատրաստումներին , փորձի փոխանակմանը մասնակցելու համար:<br>2. Հնարավորություն տալ | **1.** Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ,<br>2. Համապատասխան մասնագետներ,<br>3. ՏՀՏ | 1.Համակարգված և նպատակային աշխատանքի գրանցած արդյունք, որակ,<br>2. Մանկավարժների գրանցած արդյունքները,<br>3. |

| | | |
|---|---|---|
| առաջադեմ մանկավարժներին սեփական փորձի ներկայացման , 3. Վերանայել ուսումնական միջավայրն ու պայմանները, որոնք պետք է լինեն ի նպաստ ուսուցիչների կրթական կարիքների յուրացմանը , 4. Մոտիվացիայի բարձրացում 5. Հայտարարել առարկայական շաբաթներ և ,ըստ այդմ, կազմակերպել ցուցադրական դասեր՝ բոլոր առարկաներից, 7. Առաջնորդվելով ԿԳՄՍՆ բոլոր հրահանգներով, իրավական ակտերով նաև հաշվի առնելով մեր դպրոցի առանձնահատկությունները իրականացնել գիտելիքների վերահսկում, ստուգում, թեմատիկ պլանների, խմբակների կատարողականի ստուգում, նպատակային դասալսումներ, անհրաժեշտության դեպքում ուղղորդել ուսուցիչներին, մեթոդմիավորման արձանագրությունների համապատասխանության ստուգում, և այլ աշխատանքների | գործիքակազմ, ծրագրեր, որոնք լինելու են ի նպաստ նպատակի իրականացմանը, 4. անհատական աշխատանքային պլան | ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական որակական արդյունքների գրանցում, 4. Վերապատրաստում , կամավոր ատեստավորում անցած մանկավարժների թիվը և նրանց գրանցած արդյունքները, 5. Տարակարգ ունեցող ուսուցիչների քանակ, որակ 6. Տնօրենի տեղակալների, ՄՄ նախագահների, դասղեկների աշխատանքների համեմատական վերլուծությունների արդյունքներ, 7. ուսուցիչների վարած դասերի մեկնաբանում տարեսկզբին և տարեվերջին, համեմատական վերլուծություն |

| | | |
|---|---|---|
| իրականացում, որոնք լինելու են ի նպաստ մանկավարժական համակազմի կրթական կարիքների բավարամանը,<br>8. ՀՊՉ-ի լիարժեք ներդրման նպատակով մասնագետների հրավիրում, փորձի փոխանակման իրականացում | | |
| **Ռիսկեր՝**<br>1.Մոտիվացիայի ցածր մակարդակ ուսուցիչների շրջանակում,<br>2.ոչ բավարար ֆինանսական միջոցներ<br>3. Նորարարությունները մերժող ուսուցիչներ<br>4.ուսուցիչների գերծանրաբեռնվածության աստիճան<br>5. մանկավարժների կամավոր ատեստավորումներին մասնակցության , ինքնակրթությամբ զբաղվելու ցանկության բացակայություն | | |
| ***Կանխարգելման եղանակներ***<br>1.Բյուջեի ճիշտ կառավարում,<br>2. իրազեկվածության բարձր մակարդակի ապահովում<br>3. մոտիվացման հնարավոր տարբերակների կիրառում<br>4. քննարկումների, բանավեճերի, կլոր սեղանների և այլ միջոցառումների թվի ավելացում,որը կլինի ի նպաստ | ***Ժամանակացույց***<br>2025-2028թթ. | ***Ակնկալվող արդյունք***<br>Ժամանակակից կրթական պահանջները բավարարող, ՏՀՏ-ին տիրապետող, նորարարություններից չխուսափող, ՀՊՉ-ն յուրացրած, հմուտ մանկավարժական համակազմ: |

| | | |
|---|---|---|
| վերոնշյալ նպատակի իրագործման<br>5. համապատասխան մասնագետների հրավիրում<br>6.խրախուսման միջոցների սահմանում<br>7. աշխատանքայինպլանի կազմում<br>8.դասալսումների արդյունքների քննարկում<br>9.ՏՀՏ միջոցներից օգտվող մանկավարժների լրացուցիչ վերապատրաստմանկազմակերպում<br>10.մանկավարժների կարիքների բացահայտում,դրանց հաշվառում և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում» | | |

Նպատակ 4

Դպրոցը դարձնել համայնքային կենտրոն

| **Խնդիրներ** | | |
|---|---|---|
| 1.Դպրոցը կարող է դառնալ համայնքային կենտրոն և իր շուրջը համախմբել բոլորին, նրանց, ովքեր իրենց ներդրումը կարող են ունենալ համայնքի զարգացման, նոր շնչի հաղորդման հարցում, այդպիսով փոխելով մարդկանց կյանքի որակը:<br>2.Դպրոց-համայնք կապը բավականին թույլ է և զարգացման կարիք ունի:<br>3. Համագործակցային կապերի մտահոգիչ վիճակ: | | |
| **Գործողություններ՝** | ***Միջոցներ*** | ***Չափման գործիքներ*** |
| 1. Կազմել ծրագիր, ըստ որի դպրոցը կդառնա համայնքային կենտրոն,<br>2. իրականացնել միջոցառումներ,բանավեճեր, կլոր սեղաններ,<br>3.մշակել աշխատանքային պլան, քայլաշար,<br>4. գտնել բարերարներ , կամավորներ և հովանավորներ,<br>5. իրականացնել աշխատանքային բաշխում շահագրգիռ անձանց միջև, | Վերոնշյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են՝<br>1. մարդկային, ֆինանսական ռեսուրսներ:<br>2.Բարերարների և կամավորների դերն անգնահատելի է այս հարցում:<br>3. Բոլոր շահագրգիռ կողմերի ցանկացած ներդրում | 1.Համակարգված և նպատակային աշխատանքի վերջնարդյունք,<br>2.համագործակցային աշխատանքների բնութագրում, վերջնարդյունքներ<br>3. Աշխատանքային պլանի իրագործման վերահսկողության արձանագրում.<br>4. համատեղ իրականացվող |

| | | |
|---|---|---|
| 6. Համայնքի հետ համագործակցային կապերի ընդլայնում | | միջոցառումների թիվ, արդյունք,<br>5.հանդիպումների, կլոր սեղանների, զրույցների թիվ, քանակ , որակ,<br>6.համայնքի կողմից ի նպաստ ուսումնական հաստատության զարգացման իրականացվող ծրագրերի թիվ, արդյունք<br>7. աշխատանքների համեմատություն նախորդ տարիների հետ |
| ***Ռիսկեր***<br>1.Մոտիվացիայի ցածր մակարդակ,<br>2.ոչ բավարար գիտելիքների պաշար,<br>3. ֆինանսական ոչ բավարար միջոցներ,<br>4. ֆորսմաժորային իրավիճակներ,<br>5. վեճեր, կարծիքների անհամապատասխանություն<br>6. աշխատանքային ծանրաբեռնվածություն | | |
| ***Կանխարգելման եղանակներ***<br>1.Ներգրավել հիմնական շահառուներին | ***Ժամանակացույց***<br>2025-2030 թթ. | ***Ակնկալվող արդյունք***<br>Դպրոցը կդառնա համայնքային կենտրոն և նոր մակարդակի |

| | | |
|---|---|---|
| 2.անհրաժեշտության դեպքում դիմել փորձագետների օգնությանը,<br>3.գտնել բարերաներ և աջակիցներ,<br>4. գտնել մոտիվացման տարբերակներ,<br>5. սեփական օրինակով ցույց տալ, որ յուրաքանչյուրն իր ներդրումը կարող է ունենալ վերոնշյալ նպատակի իրականացման ճանապարհին,<br>6. ըստ անհրաժեշտության իրականացնել բանավեճեր,կլոր սեղաններ, քննարկումներ : | | կհասցնի համայնքի բնակիչների կյանքը։ Կստեղծվեմ ամուր համագործակցային կապեր, որը, բնականաբար, կլինի ի նպաստ ուսումնական հաստատության։ |

## 6.ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏ

*Դպրոցի զարգացման սույն ծրագիրը ենթակա է փոփոխության և լրամշակման ըստ անհրաժեշտության `ի նպաստ Հայաստանի Հանրապետության, կրթության նոր մակարդակի ապահովման և Գեղարքունիքի մարզի, Լիճքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի զարգացման:*